# ՅԱՅՏԱՐԱՐ ԳԻՐ ԼՐՈՅ
# ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ


## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Անցեալ զիլհիճճէի ամսոյն վերջը երկուշաբթի գիշերը՝ վեհափառ Արքային դուստր մի ծնաւ, ու անունը Պէհիճէ սուլթան դրուեցաւ. և այս ուրախութեանը ծանուցանող՝ Եպարքոսին խրկուած Խաթթի հիւմայունին օրինակն է։

—

*Իմ Եպարքոս • Այս երկուշաբթի գիշեր արարիչը մեզի դուստր մի շնորհեց, որոյ անունը Պէհիյէ սուլդան դրի • ահա քեզի և բոլոր Նախարարներուս աւետիս տալու համար՝ այս Խաթթի հիւմայունը գրեցի, և քու կողմդ խրկեցի։ Կը խնդրեմ որ բարձրեալն Ած՝ անոր ծննդեանը թէ մեր վեհափառութիւնը և թէ բոլոր ծառայները՝ երջանկութեան մէջ պահէ։*

*Ահա ամենուն իմացընելու համար՝ ըստ կանոնի երեք օր՝ օրը հինգ անգամ թնդանօթ նետվիլը՝ պէտք եղած տեղերուն պատուիրես, և մեր ծառայները և ուրիշ ուզողներն ալ՝ գիշերները կանթեղներ վառելով ուրախութիւն թող ընեն։*

*Այս մարդասէրն Ած՝ մեր թագաւորական սերունդը մշտնջենաւորեսցէ • և մեզի բարեբաստիկ որդէք շնորհելով, մեր թագաւորութիւնը միշտ անդորր և ուրախ պահեսցէ, ամէն։*

*Վերոյիշեալ Խաթթի հիւմայունին մէջը գրուած կերպովը՝ երեք օր և երեք գիշեր հնգական անգամ թնդանօթ նետվելով, և գիշերներն ալ կանթեղներ վառվելով հանդէս ցնծութեան և ուրախութ͞ե եղև։*

*Մեծի տէրութեանը ՚ի վաղուց սովորութիւնն է՝ որ ամէն տարեգլխին բոլոր Նախարարները Ինքնակալին շնորհաւորութեան կերթան • բայց այս տարեգլխին վեհափառ Արքային արքայազուն զաւակ մի ալ ծնանելով, այս երկու շնորհաւորութիւնը մէկ տեղ կատարել հարկաւորեցաւ։*

*Ուստի այս մուհարրէմի ամսոյն չորսին ուրբաթ օրը՝ ըստ սովորութ͞ե րիքեապի հանդէս ըլլալով, Եպարքոսը, Շէյխիւլիսլամը, և ուրիշ երևելի նախարարները և խուճաները՝ հրամանաւ թագաւորին արքունի ապարանքը (մապէյնը) գնացին, ու իւր դէմը ներկայանալով՝ ամէն մէկն ալ շնորհաւորութեան պարտաւորութիւննին կատարեցին։*

Արդարութեան վճռոց ժողովոյն գլխոյն (րէիսին) և Մալիէյէի նազըրին փոխվելուն համար՝ գրված Խաթթի հիւմայունին օրինակն է։

—

*Իմ Եպարքոս • Յաջողութ͞ե բարձրելոյն մեր նորոգ հաստատած բարեկարգական գործքերը օր ըստ օրէ աւելնալով ծաղկիլը յայտնի է։*

*Ուստի այն գործքերը մեր վեհափառ տէրութ͞ե կողմանէ բարակ նայիլ, և մեր բարեսրտութեանը համեմատ վարել տալով՝ կատարելութեան կէդրոնին հասցընել պարտք է։*

*Որովհետև արդարութեան վճռոց ժողովը՝ ընդհանուր բարեկարգական գործոց պաշտպան գտնըված է, նոյն պատճառաւ այն ժողովոյն գլուխը եթէ ամէն կերպ կառավարութեան ծանօթ եղած ըլլայ, բարեկարգութիւնը հարկաւ կատարելութիւն կը գտնայ։*

*Թէպէտ Հասիպ փաշան հաւատարիմ է, բայց բաւական հմտութիւն չունենալուն աղագաւ՝ իր պաշտօնէն հանել հարկաւորեցաւ։*

*Այս ամէն կերպիւ հմուտ մալիյէի նազըր Սաիպ փաշան՝ յիշեալ ժողովոյն գլուխ դրվի • և Դամասկոսի համարակալ (տէֆթէրտար) գտնըվող Մուսա սաֆվէթի էֆէնտին ալ՝ իրեն արժանաւորութ͞ե համար մուշիրութեան աստիճանաւ մալիյէի նազըրութիւնը յանձնըվի • և Հասիպ փաշան ալ հիմըկու հիմա իրեն բաւական ապրուստ կապվելով տունը նստի։*

*Ուստի այս անձինքը մեր բարձրագոյն Դուռը (պապը ալին) բերելով իրենց իմացընես • և Մուսա սաֆվէթի էֆէնտիին տեղն ալ՝ վերոյիշեալ ժողովոյն մէջ մէկ յարմար անձը ընտրըվի, ու որպիսութիւնը ինձ ծանուցանելով՝ անոր պաշտօնատարութեան հրամանը ինձմէ խնդրըվի։*

*Ուրեմն պարգևատուն բարեաց՝ բոլորին գործոցը յաջողութիւն տայ, ամէն։*

Յիշեալ արքայական խնդրին մէջ հրաման եղած կերպովը՝ Սաիպ փաշան և Սաֆվէթի փաշան յարքունի դուռը կոչուելով, երկուքին ալ պաշտօնատարութիւնը իրենց իմացումն տրուեցաւ։

Նոր Սաֆվէթի փաշային վրան դրուած Դամասկոսի համարակալութիւնը (տէֆթէրտարութիւնը) հրամանաւ Արքային՝ նախարարներէն Թիճարէթի խորհրդական (միւսթէշար) Էնվէրի էֆէնտիին յանձնուելով, շնորհակալութեան համար ալ՝ այս մուհարրէմի ամսոյն 12 ին շաբաթ օրը Ինքնակալին դէմը ներկայանալով՝ արքայական խնամոցը և գթութեանցը արժանանալէն 'ի զատ՝ իրեն առաջին րութպէյին առաջին սընֆի սանիձանն ալ տրուեցաւ. և իրեն ընտանեացը համար զատ ապրուստ ալ կապուեցաւ։

Դամասկոսի բդէշխ Նէձիպ փաշան, իրեն քէթխիւտայ խաֆուձի պաշի հաձի Մուսդաֆա աղային՝ րիքէապի խաֆուձի պաշիլութեան տրուիլը, և իւր քէաթիպին Ռում էլիի մէքթիւպձիի խիւլէֆաներէն խոճիկեան Սաադ պէյին ալ՝ երրորդ րութպէյին նշանը շնորհուիլը խնդրած էր. որուն խնդիրքը՝ այժմ հրամանաւ Արքային կատարուելէն 'ի զատ՝ իւր որդւոյն Ահմէտ պէյը՝ որ այժմ Օսման և փօսթա միւտիրի դրուած է, անոր ալ՝ իրեն նմանակիցներուն տրուած կերպովը նշան մը շնորհուեցաւ։

Ալաշեհր քաղաքին մէջ անկեց յառաջ պատահեալ խառովութեանը համար, նոյն քաղաքի դատաւորը՝ (նաիպը) Ապտիւլ րահման զէքի էֆէնտին, և մուհասսըլը՝ Մէհէմմէտ իզզէթ պէյը, և նոյն տեղացի ըլլալով զապիդը՝ Հիւմմէթ աղան, և այն տեղի ժողովոյն անդամներէն՝ նաև ուրիշ երևելիներէն մէկ քանի անձինքներու հետ Թաթար զատէ Մէհէմմէտ էֆէնտին արդարութեան վճռոց ժողովը ներկայացընելով՝ երկար բարակ քննութիւն եղաւ։

Այս անձինքներուն մէջէն դատաւորը՝ մուհասսըլը և Հիւմմէթ աղան յանցաւոր դտնուեցան. վասն զի ասոնք դատաւորին կողմնական ըլլալով, երբոր հասարակութիւնը դատաւորէն կըբողոքէ ու անոր ելլալը կը խնդրէ, այս անձինքները՝ ընդհակառակն չինծու արզի մահզար խրկելով՝ դատաւորին մնալը ուզեր են։

Անկեց 'ի զատ՝ այն տեղի ժողովոյն անդամները՝ կանոնին պահանջմամբը հասարակութեան կողմանէ չեն ընտրուեր, այլ միայն իրենց կամացը ուրին որ համեմատ դտնուեր է նէ՝ անոնք ընտրուեր են։ Նաև մանաւանդ զօրաց վերաբերեալ գործոց համար դրուած մազպատային ձևակարը՝ ժողովէն դաղտնի այս խառովական գործն ալ դրուելով՝ պույրուլթու առնուեր է։

Հիւմմէթ աղային զապիդութեանը համար խնդրուած մազպատան՝ այն տեղի ժողովոյն անդամ Աբտուլլահ հիլմի էֆէնտին անպատշաճ համարելով չի զմռելուն պատճառաւ, զանիկա դուրս ըրեր են։ Նաև ամէն գործառնութիւն իրենց հաճոյիցը յարմար գործել տալու դիտաւորութեամբ՝ դատարանը (մահքէմէն) քաղաքի բնակիչներէն շատ մը մարդ հաւաքել տուեր են. և այսպէս ընդդէմ հրամանի Ինքնակալին՝ խառովութիւն ձգելու պատճառ եղեր են։

Հիմա այս մարդկանց յանցանացը փոխարէն հարկ եղածը 'ի գործ դրուելու համար, ժողովոյն մէջ այս կերպ մազպատամը դրուեր է, "Թէ այս մուհասսըլին և դատաւորին որոշ ժամանակաւ աքսորուելնին հարկ է. բայց հասարակութիւնը կըծանուցանէ, թէ մուհասսըլը տէրութեան եկամուտէն իրեն բաժակ է անցուցեր, և դատաւորին ալ անոր հետ մէկ տեղ ըլլալը կերևի. ուստի մինչև անոնց որպիսութիւնը մազպատան դալու ըլլայ, ասոնք ըսպասել տալու համար, հիմիկուց հիմա ասոնց երաշխաւորը առնելը պատշաճ կերևի. և այժմ այն քաղաքը մէկ աղէկ գործունեայ մուհասսըլ մը խըրկուիլը, և այն տեղի ժողովոյն անդամները ընտրութեամբ և վճռական դրուիլը, նաև դատաւորին ալ փոխուիլը, և Հիւմմէթ աղային ալ՝ առ 'ի պատիժ մէկ տեղ մը աքսորուիլը յարմար կըտեսնուի"։

Երբոր այս մազպատան ընդհանուր ժողովոյն դէմ կարդացուելով՝ այս կերպը թէև արժան տեսնուեր է. բայց վերյիշեալ երեք մարդկանց խիստ յանցաւոր դտնուելնուն համար, հրամանաւ Թագաւորին՝ յիշեալ դատաւորը Այտըն կիւզէլ հիսար, և մուհասսըլը Պուրսայ, և Հիւմմէթ աղան Մանիսա՝ տանոց ըսպասել տալու որոշ ժամանակաւ աքսորուեցան։

Յառաջմանէ Էկրիպօզի կողմէն եկող խօճէկեան Իսմայիլ էֆէնտին՝ Ալաշեհրին մուհասսըլ ընտրուեր, և ուրիշ անձ մի ալ դատաւոր խըրկուեր է։

Նախկին մուհասսըլին համարը (հիսապը) այժմեան մուհասսըլին հետ դէմ յանդիման տեսնուիլը հարկաւոր ըլլալով՝ Պուրսայի զապդիյէի մէմուր Ֆէրիդ Իւմէթ փաշային հրաման դացեր է, որ իրեն մարդիկներէն մէկը՝ այն աքսորեալ մուհասսըլին հետ մէկ տեղ Ալաշեհր յուղարկէ, որ համարը տեսնուելէն յետոյ՝ կրկին իրեն աքսորման տեղը դարձընէ։

Ահա այսպէս ընդդէմ հրամանի Արքային յանցանք ընողները՝ ովոք ըլլան, առանց յապաղման պատիժնին պիտի կրեն։

Մալիյէի նախկին Թեզքերէճի Գահիր Էօմէր պէյին՝ որ անցեալները Մէնթէշա սանճաղին մուհասսըլութիւնը յանձնըւէր էր, այժմ եւ Արքային հրամանաւը երրորդ րութպէյին նշանը շնորհուեցաւ։

Սերասքէր փաշային մէօհիւրտար Րիֆաթ պէյ էֆէնտիին՝ րիքեապի խափուձի պաշիյութիւն, և յիշեալ փաշային աշխատաւորներէն Պէհրամ աղային՝ ու հաձի Մահմուտ աղային ալ խափուձի պաշիյութիւն, և Ահմէտ պէյին՝ ու արքունի խաղնային գրագիր Էպուպէքիր սըտգի էֆէնտիին ալ խօձէկեանութիւն, և միւտէրրիսներէն պապ նաիպի Մէհէմմէտ Ֆըռըրի էֆէնտիին ու Հիւսէյին զիւաի էֆէնտիին ալ ըսթանպօլ միւտէրրիսլիկի րուլած աստիճանը տըրուեցան։

Նու սերասքէրին դուռը Թահրիրաթի օտան պաշտօնատար գըտնըւող Հաֆըզ էֆէնտիին, Սապրի էֆէնտիին, Իպրահիմ էֆէնտիին, Ղալիպ էֆէնտիին, մէքթիւպճիի մաքյէթէը գըտնըւող Քերամի էֆէնտիին, ժուռնալի պաշ րէֆիգ Էշրէֆ էֆէնտիին, ժուռնալի գրագիրներէն հաձի Նաղիֆ էֆէնտիին, Րիւսուխի էֆէնտիին, Սէտատ էֆէնտիին, հրամանաւ Արքային՝ այս յիշեալ անձանց խօձէկեանութիւն շընորհուեցաւ։

---

Չերքէշի և Թօսեայի, Չանղըրըյի և անոր կցորդեղած քաղաքներուն մուհասսըլութիւնները մէկ մէկու հետ կցորդելով, Արքային հրամանաւը այժմեան Չանղըրըյի մուհասսըլ Խալիլ աղային յանձնըւեցաւ։

Բոլուի և անոր վերաբերեալ քաղաքներուն մուհասսըլ՝ խօձէկեան Սալիպ էֆէնտին այն տեղերուն օդը և ջուրը իրեն չըյարմարելուն համար, իւր պաշտօնէն ելլալու խնդիրք ըրեր է. ուստի յիշեալ քաղաքներն ալ Գօնեայի մուհասսըլութեանը կցած եղաւ։

Եվգաֆի մուհասէպէյի խալէֆին միւմէյիզի սանի Իզզէթ էֆէնտիին մեռնելուն համար, Մէհէմմէտ Շաքիր էֆէնտին որ անկէց յառաջ այս պաշտօնին մէջ գըտնըւած էր ու հիմա ալ իւր ընակարանը կըկենայ, հրամանաւ Արքային մեռնողին տեղը դըրվեցաւ։

Սերասքէր փաշային Թէրճիման Տիմիթրաշքօ պէյը հաւատարիմ և յիշեալ փաշային վաղեմի աշխատաւորը գըտնըւած ըլլալուն համար, անոր մէկ նըշան մը շնորհւիլը՝ յիշեալ փաշան խնդիրք ըրեր էր, որուն խնդիրքը՝ բարեխնամ Արքային հրամանաւը կատարուեցաւ։

Դամասկոսի բըդէշխ Նէձիպ փաշային այս կողմը պատահած գործքերը տեսնալու և կարգի դնելու մտօք, հրամանաւ Արքային մեռնող Նաշիտ պէյին տըղան՝ Մուխթար պէյը խափու քէթխիւտասի դըրվեցաւ։

Տէնիզլիի մուհասսըլ խօձէկեան Րաթիպ էֆէնտիին փոխվիլը հարկաւորելով, հրամանաւ Ինքնակալին անոր տեղը րիքեապի խափուձի պաշի հաձի Մէսրուր աղան դըրվեցաւ։

Բէյշէհիրի և անոր վերաբերեալ քաղաքներուն մուհասսըլ Գահիր էֆէնտիին ալ պազի անկարգութիւններ ընելուն համար, ասոր տեղն ալ յառաջման Սախըզի մուհասսըլ՝ մեռնող հաձի Գատըրի աղային փեսայ խօձէկեան Մէհէմմէտ պէյը մուհասսըլ դըրվեցաւ։

---

Լօնտրա քաղաքը կեցող Ռուսի տէրութեան դեսպան պարօն Պէրնօֆ երևելի իշխանին աներձագ՝ Շըվէտի տէրութեան հպատակներէն Րուփէրտէփէրս անունով օֆիձիալը՝ Աստրեաստանի պատահած մեծի տէրութեանը գործքերուն մէջ գըտնըւելու փափագով արքայանիստ քաղաքը եկեր էր։

Նոյն յարգի անձը պատերազմական արհեստին բաւական հմտութիւն և տեղեկութիւն ունենալուն համար, բարեխնամ Արքային հրամանաւը անոր միրալայութեան աստիճանը շնորհվեցաւ։